

26. 380



# ԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

ՍՈՒՐԵՆ ԱՎՐՈՅՈՒ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱՌՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՏԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ԴԵՏՐԱՍ  
ՅԵՐԵԿԱՆ

1·9·3·1

26.07.2013

26380

05 JAN 2010

## ԱՌԵՎ ՍԱՐԴԱՅԱՆ

334.6:637+ 1633.41

0-25

۱۴۷

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

1465



15016-57

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՄԲԱԿԻ  
ԱՆԿԵԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Հնդամլա պլանի անցյալ տարվա առաջադրանքների գերակատարումը, մանավանդ ծանր խնդուստրիալի և մեքենա շինարարության ապարիզում, հնարավորություն և տալիս խորհրդակին իշխանությանը հնդամլակի յերրորդ տարում ել ավելի մեծացնել զյուղատնտեսության ներդրումները, համեմատած նախորդ տարիների հետ. Պետությունն արագիսով ավելի յեռժեղացնում այս ոգնությունը, վորը ցուց և տրվում գյուղին՝ չքավոր և միջակ անտեսությունների կոլեկտիվացման, կուլակությանը՝ վորպես դասակարգ վերացնելու գործին. Մանր ինդուստրիալի զարգացման խոշորագույն նվաճումները հրնարավորություն են տվել կուսակցությանը խոսել այժմ թեթև արդյունաբերության ել ավելի ընդլանման մասին 16-րդ կուսհամագումարը հրահանգ տվեց՝ ամեն կերպ զարգացնելով ծանր ինդուստրիան, վորպես սոցիալիստական շինա-

բարության հիմնական բազա, «ուժեղացնել արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք արտադրում են մասսայական կարիքներն ապահովող ապրանքները». հարց ե ծագում—ի՞նչ ե հարկավոր մեղ, վորպեսզի կարողանանք ապահովել այդ կարիքները.—իհարկե, անհրաժեշտ ե մեծագույն չափով լայնացնել հումքի բազան—հատկապես տեխնիկական բույսերի և առանձնապես բամբակի, վորպես տեքստիլ արդիունաբերության բազա։ 16-րդ կուսհամագումարի վորոշումներն այդ առթիվ կոլխոզ-մասսավի առաջդնում են՝ մեկ հիմնական խնդիր՝ ամրացնել բամբակագործության նվաճումները, ել ավելի լայնացնել բամբակի ցանքսի տարածությունը և բարձրացնել բերքատվությանը։

Կան մարդիկ, վորոնք փորձում են հակադրել բամբակի ցանքսի տարածության լայնացման խնդիրը բերքատվության բարձրացման խնդրին։ Հիշյալ լերկու հարցերի հակադրումը մեկը մյուսին—կոպիտ սխալ ե։

Չպետք ե մոռացության մատնել բալշիկայն յերկրորդ գարնանացանի շտաբ Հ. Կ. (թ) Կ. դիրեկտիվը, վորոնք առաջարկում ե «հնդամյակի վերջում Անդրկովկասի բամբակի բերքատվությունը բարձրացնել վոչ պակաս, քան 70 տոկոսով»։ ուրեմն հասկանալի լի, վոր մեղ անհը-

րաժեշտ ե ել ավելի ընդարձակել բալշիկայն պալքարը բամբակի ցանքսի տարածության լայնացման և բերքի բարձրացման համար։

Պարզ ե, թե ինչ կարենը և պատասխանառու խնդիր ե գրվում Հայաստանի բամբակագործական կոլխուսությունների առաջ։ Պայքարը բամբակի անկախության համար, պայքար ե բամբակի ցանքսի լայնացման և բերքատվության բարձրացման համար։ Միաժամանակ այդ նշանակում ե պալքարել կոլխոզ վերելքի և կուլեկտիվ տնտեսությունների նյութական բազան ամրացնելու համար։

Բայց կության առաջին գարնանացանն անցավ գլուղի կուլակալին տարրերի կատաղի գիմազըրությամբ և պրովակացիաների ներքո, կուլակությունն ամեն տեսակի ստոր սիջոցների լի դիմում, վորպեսզի վիճեցնի բամբակացանի, բամբակը մշակելու և բերքահավաքի կամպանիաները։

Կուլակությունից հետ չելին մնում նաև նրա հավատարիմ ազենտ—աջ և «ձախ» ոպորտունիստները, վորոնք պատերի տակ փսխում ելին պլանների անիրագործելի և վոչ ոհալ լինելու մասին։ սակայն ջնորհիվ կոլխոզ մասսավի ակտիվության և գիտակցության, քաղաքի պրոլետարիատի ամուր դեկադարության և գործնա-

կան ռգնության — կուլակության և նրա ագենտուրայի հուլսերը ջախջախվեցին, կոլխոզները հրնարավորություն ունեցան տարվա վերջին հիմնականում հաջող բաշխել տարվա ինկամուտը և առաջ բերել նոր հսկայական կոլխոզ վերելքը:

Որեցոր աճում, զարգանում և ամրանում են կոլխոզները:

Երջան	1/12 1929թ.	1/9 1930թ.	1/1 1931թ.	1/2 1931թ.	20/2 1931թ.	Կոլխոզների քանակը
1. Հուրդուղ.	13.8	20,10	26,4	29,3	34,0	18
2. Վաղպատ	5,5	14,5	18,0	20,5	23,4	40
3. Համարլու	8,8	13,7	15,4	21,0	22,8	54
4. Վեղի	2,5	4,4	5,6	7,0	10,3	15

Կոլխոզների աճման հետ միասին լայնանում են բամբակի ցանքսի տարածությունը, բարձրանում են բերքատվությունը:

Հսա տարիների	Բամբակի տարածությունը թիունը կոլխոզներում	Բերքատվությունը՝		Շարքա- ցան	Գարար- տացում
		Հայաստա- նում	Կոլխոզնե- րում		
1927 թ.	25				
1928 թ.	119				
1929 թ.	1104	6,4	7	430	256
1930 թ.	4622	7	7,5	4,52	1616
1931 թ.	15.000	11,25	11,7	100 %	100 %

1930 թ. բամբակացանի կամպանիան իր մի շարք թերություններով ապացուցեց անուամենական հայնիվ բամբակացան չըջանների գործնական աշխատանքներով. Կոմ կուսակցության հուլիսան վորոշումների վոչ միայն կատարելու, այլ և գերակատարելու հնարավորությունը: Յերկրագնդի բամբակագործության պատմությունը չգիտի այնպիսի վճռական հեղաշրջում, վորին ականատես ենք մենք—Խորհրդակին Միության մեջ:

	1929 թ. հազ. տոնն	1930 թ. հազ. տոնն
1. Միջին Առիա և Կա- ղակատն	764,8	967,4
2. Անդրկավկաս	56,2	64,7
3. Նոր ՀՊՀ անդամներ	1,5	7,4
Ամբողջ Միության մեջ	893,5	10 9,9
Աճում 0-ներսով	1045	131,6

Այդ հսկայական թոփշքն ել ավելի յէ աչքի ընկնում, իերը մենք համեմատության մեջ ենք դնում Միության բամբակագործության գարբացման թվերը Ամերիկակի բամբակագործության ճգնաժամն արտահայտող թվերի հետ.

	Ամսթիկա	Թուղթային Միություն.
1926 թ.	18118 Համարական գլուխություն	738 Հեռություն
1927 թ.	12847 Համարական գլուխություն	988 Հեռություն
1928 թ.	14540 Համարական գլուխություն	1208 Հեռություն
1929 թ.	14745 Համարական գլուխություն	1325 Հեռություն

Այն ժամանակ, իերք Միության բամբակագործությունը տարեց-տարի զարգանում է, Ամերիկայում այսոր հարց ե դրված լայն չափով կրճատել բամբակի ցանքսի տարածությունը: Այդ հանդամանքը բղխում ե կապիտալիստական իերկրներում առաջացած և որեցոր խորացող ընդհանուր տնտեսական ճգնաժամից: Սակայն չնայած, վոր ընդհանուր առմամբ մեր բամբակագործությունը հսկալական քայլերով զարգանում է, այնուամենայնիվ 1930 թ. կուսակցության կողմից առաջարրած ծրագիրը չալաստանում թերակատարվեց: Վորոշ կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը ճիշտ չի կատարվել, վորն առաջ ե բերել դժվարություններ, թե պլանային տնտեսավարության և թե գործադրված աշխատանքների արդյունքների հաշվառման համար: Կոլխոզները սոցիալիստական մքցման և հարվածայնության

մեթոդները քիչ են կիրառել: Ծնդհանուր առմամբ բացակայել ե այդ մեթոդների գործադրումից առաջացած արտադրական—անտեսական եֆեկտի հաշվառումը: Բացի այդ, տեղ-տեղ բացակալել ե նաև համապատասխան կարգաբանություն, բրիգադային աշխատանք, նարբագների սիստեմը, տեղի եւ ունեցել աշխատանքից բացակայություններ, ցանքսերի վատ մշակում և վոռոգման ջրերի վոչ ուսցիունալ ուտագործում: Մատնանշված թերությունները ընական ե, վոր պետք ե բացասական տնտեսական արդյունք տային բոլոր բնագավառներուն: Ենց զրա հետեանուն ե, վոր վորոշ կոլխոզներ թերակատարեցին իրենց ծրագիրը, ցանքսերը չորացան և ժամանակին չքաղհանվեցին, չջրվեցին բամբակի դաշտերը և այն:

Այս և մյուս բոլոր պատճառները հաշվի առնելով, բամբակացան զրջանների կոլխոզները պետք ե պատրաստվեն բայլշեվիկան լերկրորդ գարնանացանին:

Բայլշեվիկան լերկրորդ գարնանացանը բամբակագործական կոլխոզների առաջ գնում ե հըսկական ծրագիր՝ բամբակագործության սոցիալիստական վերակառուցման, բամբակի բերքի բարձրացման և 100 տոկոսով աշրու-կոմպլիքսի աշխատանքի կիրառման ասպարիզում: Համկոմկուսի դեկտեմբերյան պլենումի վորոշումների

հիման վրա՝ բամբակագործական շրջանները մինչև 1931 թ. գարունը պետք ե կոլեկտիվացման լինթարկվեն 50 տոկոսով։ Կամաձից դուրս ե, վոր որևէ որ աճող կոլխոզները ճիշտ դեկավարման ներքո և համապատասխան ոգնությամբ ապահովամ են կուսակցությունն կողմից նաև առաջարկությամբ 15 000 հեկտար բամբակ, ընդդրկելով Հայաստանի 1931 թ. բամբակի ցանքսի 60 տոկոսը։

1931 թ. բամբակացան շշաների կոլեկտիվացման յնը բամբակացանի ծրագիրը

Շրջանի անունը.	Հրչանակական միավորները	Գործադրությունները	Գործադրությունները	Կողմանի բամբակացանի առաջարկությունները	Կողմանի բամբակացանի առաջարկությունները	Կողմանի բամբակացանի առաջարկությունները	1931 թ. կողմանի բամբակացանի առաջարկությունները
1. Ղուրզուղ.	6745	56	3777	9863	70	7.000	
2. Վաղարշա	9525	42	4'000	7130	56	4.250	
3. Ղամարլու	10137	40	4044	6232	55	3.450	
4. Վեդի	3426	18	690	1775	20	50	

Կոլխոզները պետք ե տան լերկին 176,085 ցենտներ բամբակ, ինչեւ այդ քանակը վերածե-

լու լինենք վոսկու, ու հավասար կիրակ հսկայական քանական մեքենաների, վորոնց ներմուծումն ապահովում ե յերկրի ծանր ինդուստրիալի զարգացումը և հետևապես զլուղատնտեսության մեքենայացման և հեկտարի փեկացիալի ել և վելի արագ թափը։

Բացի 15.000 հեկտար բամբակ ցանկաց հայաստանի կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում այս տարի առաջին անգամ կատարվում ե միանդամայն նոր խոշոր քաղաքական և տնտեսական նշանակություն ունեցող աշխատանք – դա բամբակի մշակելն ե սածիլով։ Այդ աշխատանքը նույնպ ս հսկայական նշանակություն ունի բամբակի ցանքսի տարածության լավացման և բերքատվության ասպարիզում։ մեզ մոտ այդ աշխատանքն արդեն ձեռնարկված ե Վաղարշատի, Ղամարլովի և Ղուրզուղու շրջանների կոլխոզներում 60 հեկտար տարածության վրա և Սարդարաբատի ու Խորհրդային Յ ը լ անտեսություններու 45 հեկտար տարածության վրա։ Մինչին Ասիալի սովորողների և կոլխոզների պրակտիկ աշխատանքներն այդ ուղղությամբ իրավունք են տալիս սեզ ասել, վոր սածիլավոր բամբակի աշխատանքները խոշոր հեռանկարներ ունեն նաև մեր պալմաններում։ Խնչ տնտեսական եֆեկտ ե

տալիս սածիլավոր բամբակը. նա 1) բարձրաց-  
 նում ե բամբակի բերքատվությունը. 2) ստաց-  
 վում ե բարձր վորակի էլեկտրաթել բամբակ. 3)  
 սովորականից շուտ ե ազատում դաշտերը—հե-  
 տևապես և հնարավորություն ե ստեղծում ժա-  
 մանակին կատարել աշնանավարը և ձմռան արա-  
 տը. 4) հնարավորություն ե ստեղծում ռացիո-  
 նալ ոգտագործել ձմռան ամիսներում կոլխոզնիկ-  
 ների ազատ բանվորական ձեռքերը. 5) և վեր-  
 ջապես հնարավորություն ե տալիս աճեցնել մեր  
 կլիմայական պայմաններին չհամապատասխանող,  
 ուշ հասնող լեզվական բամբակի տեսակները,  
 բամբակ սպորտության վերակտուցման հիմնա-  
 կան գործոններերից մեկն ե հանդիսանում ա-  
 մուր մեքենայական բազան, հատկապես տրակ-  
 առը, վորը, հակառակ հին ազրոնոմների ամե-  
 նավատ մասի հետադիմական և սեակցիոն թեո-  
 րիաների, համառ կերպով հաղթահարելով բոլոր  
 դժվարությունները, շրջում ե բամբակի համար-  
 նացրած դաշտերը և հիմնականում լուծում բամ-  
 բակագործական շրջանների ամենադժվարին և  
 սուր խնդիրը—բանվորական ձեռքի պակասի  
 խնդիրը. Այս տարի Հայաստանում համաձառ  
 բարձրագույն մարմինների վորոշման՝ բամբակա-  
 գործական շրջաններում կազմակերպվել ե լերեք  
 նոր մեքենատրակտորավին կայաններ՝ Վաղարշա-

պատռում, Ուկուսանլվում և Վերդիբառում:  
 Բացի դրանից բավականին լայնացվել ե մեկ  
 տարի գորությունն ունեցող Սարդարաբատի մե-  
 քենատրակտորային կայանը:

Մեքենատրակտորային կայանի անունը	Տրակտորների քանակը	Տրակտորների ուժը
1. Սարդարաբատ	66	800
2. Ռուբենալու	35	475
3. Վաղարշապատ	39	600
4. Դավալու	10	150
	150	2.025

1931 թ. ամբողջ ազգու-կոմպլեքսը կոլխոզ-  
 ներում (ցանքը, մեքենայով պարարտացումը և  
 այլն) կատարվելու իւ մեքենատրակտորային կա-  
 յանների միջոցով: Բամբակմիության ամբողջ  
 շրջանային ագրոպակերպները հանձնված լինելով  
 մեքենատրակտորավին կայաններին, աշխատելու  
 յին կոլխոզների ազգու-կոմպլեքսի գծով:

Ի՞նչ ե մեքենատրակտորային կայանը. «մե-  
 քենատրակտորային կայանները, ինչպես և խոր-  
 հրդալին անտեսությունները հանդիսանում են  
 կուլակության, վորպես դասակարգ, վերացնելու  
 և համատարած կոլեկտիվացման հենակետը» ա-  
 սում ե Համկոմկուսի կենտկոմը: Մեքենատրակ-  
 տորային կայանը—դա մեքենայական քաշող ու-

ժի և տեխնիկական կահավորման կենտրոնացման այն կետն ե, վորը կրչված ե արտադրական սպասարկություն ցուց տալու շրջակա կոլեկտիվ տնտեսություններին և աշխատավոր գյուղական տնտել սությունները — անջատ, հետամաց և անկուլտուր վիճակից տանել դեպի նոր — սոցիալիստական հիմունքներով կազմակերպված խոշոր կոլեկտիվ տնտեսություն, դեպի համայնական — կոլեկտիվ աշխատանք, դեպի կուլտուրական կյանք:

Թվերը բամբակագործական շրջանների որեցոր ամսող կալեկտիվացման մասին դալիս են տաեւու, վոր հիմնականում աշխատավոր պյուղացիությունն ըմբռնել ե և հասկացել կոլեկտիվ — ի շոր տնտեսության առավելություն անհատականի հանդեպ. սրան ապացուց են ներքեւում բերված թվերը, վորոնք պարզ պատկեր են տալիս այն մասին, թի ինչ չափով ե աճում տնտեսության յեկամուտը կոլխոզ մտնելու հետեանքով (տես էջ 15):

Անհրաժեշտ ե լայն չափով մասսայականացնել լավագ ւն կոլտնտեսություն երի փորձը, կազմակերպել հին, փորձված հարվածային կոլխոզիկներից ու կոլխոզուհիներից բրիգադաներ, ըուքսիրի տակ վերցնելով հետ մնացող կոխողները, պարզաբանել ու տեղն ու տեղը բուժել

Ք յ ո ւ ղ	Ազգանուն, անուն	Ցեկա- մուտը 1929 թ.	Ցեկա- մուտը 1930 թ.
1. Վաղարշակ	Մատուրյան Յեղիշ	285	448
2. »	Բելոյան Ավագ	225	511
3. Փարաքար	Սրովյան Յենոք	200	555
4. Քուզենդ	Դանելյան Հովհան-	388	516
5. »	Նես միջակ	360	588-30 կ.
6. Փարաքար	Մազմանյան Վար-	220	438
7. »	Արովյան Անդրա-	239	669
8. Իգալլու	Պետրոսյան Նիկոլ	410	856
9. Ղարաքիլիսա	Բոխյան Մացակ	562	899
10. Մալազյոքչա	Ցաղության Ներսիս	563	946-15 կ.
11. Աշոտարակ	Մանյան Արտուր	463	828
12. Ստմաղար	Աղայան Մարգիս	270	540
13. Ղարաքիլիսա	Բահեմալյան Միքա-	664	893

արդարիսի կոլխոզներում հայտնաբերված հիվանդագին յերեսությները, կոլխոզների և անհատականների լայն միացլալ ժողովներում լայն ինք-


Նաքննադատության կրակի տակ յերեան հանել լողըներին, պոկողական տրամադրություն ունեցող անհատներին, սիմուլյամետներին և այլն, ել ավելի ուժեղացնել բացատրական և այլ աշխատանքները նորանոր հազարավ որ աշխատավոր գյուղական տնտեսություններ կոլխոզներ ներգրավելու համար, ել ավելի լայնացնել կոլեկտիվ տնտեսությունների հողերի տարածությունը։ Հայաստանի կոլխոզկենտրոնը նախատեսնում ե կազմակերպել 20 խոշոր բամբակագործական կոլխոզներ 200 հեկտարից փոչ պակաս տարածությամբ։ Այդ տիպի կոլխոզներում բամբակի ցանքսը և հետագա մշակումը (քաղհան և ալին) կատարվելու յե հատուկ տրակտորներով և տրակտորային շաբացաններով ու քաղհան մեքենաներով։

Բացի մեքենատրակտորային կայաններից, կոլխոզների ծրագրի կատարման գործում մեծ դեր ունեն նաև խորհրդային տնտեսությունները։ Խորհրդային տնտեսությունների անելիքներից մեկն ե ծառայել կոլեկտիվ տնտեսությունների ազգո-արտադրական ովնություն ցույց տալու գործին, իրեց խոշոր արհեստանոցներով, բարձր տիպի մեքենաներով, բարձրորակ մասնագետներով, հարուստ ազրոնոսիական փորձերով, կազմակերպված աշխատանքներով՝ սովորեցնել

կոլեկտիվներին աշխատանքների ռացիոնալ կազմակերպման ձևերը, ցույց տալ միաժամանակ խոշոր տեխնիկական ոգնություն, հետևապես և ոժանդակել կոլխոզների լայնացմանը և տեխնիկական ամրացմանը։

Մոտենում ե դաշտավին աշխատանքների ժամանակը՝ բայց եփկյան գարնանացանի լրիվ կատարումը՝ նորանոր հազարավոր հեկտար բամբակի ցանքս, բերքատվության բարձրացում—գտնվում ե իրենց—կոլխոզնիկների ձեռքում

Համատարած կոլեկտիվացումը, վորի ուղիով այժմ գնում ե խորհրդավին գյուղը, —կուլակի, նեպմանի, տերտերների և նմանների գերեզմանն ե փորում։ Համարական յե, վոր գարնանացանի նախապատրաստական աշխատանքները ընթանում են ալդ տարրերի և նրանց հավատարիմ ազենտ աջ և «Ճախ» ոպրոտյունիստների կատաղի դիմադրության ու պլովակացիաների ներքո։ Այդ պայքարին դիմադրելու և բոլոր աեսակի պլովակացիաները հաղթահարելու և կանխելու համար կոլխոզներն ամենից առաջ պետք ե լինեն լավ կազմակերպված և ունենան ուժեղ, գործունյա բատրակ-չքավորական խմբակներ։ Բատրակ-չքավորական խմբակները, միացած կոլխոզմասսավի և գլուղի ամբողջ աշխատավոր գյուղացիո, թյան հետ՝ քաղաքի պլովետարիատի



զեկավարությամբ և ոգն-էթյամբ պետք և ջախ-  
ջախեն գյուղի դասակարգավիճ թշնամուն: Յու-  
րաքանչյուր կոխովնիկի և աշխատավոր բամ-  
բակացանի պարտականությունն եւ հսկել, վոր-  
պեսզի կուլակը վոչ միայն հնարավորություն  
չունենա այսպես թե այսպես հարվածել մեր  
պլաններին, այս հսկել, վորպեսզի ինքը - կու-  
լակը լիւզին կատարի այն ծրագիրը, վորը  
տրված եւ նրան պեռության կողմից:

Յերկրորդ հանգամանքը, վորը և վճռական  
նշանակություն ունի գարնանացանի աշխա-  
տանքների հաջող ընթացքի գործում, դա կոլ-  
խոգուհիների մասնակցության ապահովելն ե  
գարնանացանի աշխատանքներին:

Առանց կնոջ ակտիվ մասնակցության կոլ-  
խոզի ամբողջ կյանքին, առողջ լեվ կայուն  
կոլխոզ կառուցելը հնարավոր չե: Այս հանգա-  
մանքը անդայման պետք եւ հաշվի առնել և ա-  
ռավելագույն չափով ապահովել կնոջ մասնակ-  
ցությունը կողովզի արտադրական-տնտեսական  
դեկավարման և այլ աշխատանքներին:

Կնոջ աշխատանքը 100 տոկոսով ապահովե-  
րու համար 1931 թ. բացվելու յեն մասունքը,  
մանկապարտեզներ, մանկաբարակներ և այն:

Հարկավոր ե միայն, վոր կոլխոզ վարչու-  
թունները այնպես դաստվորեն աշխատանքները,

վորպեսզի մալրերը հանդիսաւ կարողանան կա-  
տարել իրենց վրա դրված պարտականություննե-  
րը:

Յերրորդ հանգամանքը, վորի վրա անհրա-  
ժեշտ եւ գարնել առանձին ուշադրություն և  
վորի թույլ դրվածքի պատճառով բավականին  
տուժել են անցյալ տարվա աշխատանքները —  
այդ կոլխոզներում սոցմրցման և հարվածալ-  
նության մեթոդների կիրառման խոդիրն եւ:  
Առում ենք թույլ դրվածքը, վորովեակ յեթե  
վորեն տեղ այդ մեթոդները գործածվել են, ապա  
միանգամայն բացակայել եւ այդ մեթոդների կի-  
րառումից առաջացած տնտեսական եփեկտի  
հաշվառումը: Մեր գործարաններում, գովողնե-  
րում, հանքերում և այլն, կուսակցության դե-  
կավարությամբ և արհմիությունների աշխա-  
տանքներով լայն ծավալ են ստացել սոցմրցումը և  
հարվածալությունը: Զիա ալժմ գործարան,  
վոր սոցմրցման պարմանակիր կնքած վիճի հա-  
րեան կամ ուրիշ քայլաքի վորեւե զործարանի  
հետ, անգամ լուրաքանչյուր գործարանում կան  
հսկայական քանակությամբ իրար հետ մցող  
բանվոր անհատներ, բրիգադներ, ցեխեր և այլն:  
Դա յե հիմն ական պատճառներից մեկը, վոր  
հնարավորություն ետալիս մեզ կատարել հըն-  
գամակը չորս տարում, իսկ աբդյունաբերության

գորոշ ճյուղերում՝ նույնիսկ 2/2—Յ տարրւմ։ Սոցիալստական արդյունաբերությունը պահանջում է զյուղից հումուցթ, իսկ զյուղի սոցսեկտորի արտադրողականությանը բարձրացմանն երկաթափը լրիվ չի կարող բավարարել արդյունաբերությանը, իեթե հիմնական բեկում չմտցվի կոլխոզների աշխատանքների մեթոզների մեջ։ Այժմ մավանից պետք ե լայն ծավալել սոցմրցման և հարվածայնության մեթոզները, պայմանագրեր կնքել հարեւան կոլխոզների հետ և կոլխոզի ներսում զանազան բրիգադների և անհատների միջև և անպայման ճշգրիտ հաշվի առնելու մասսականացնել ստացված արդյունքները, կազմակերպել հասարակական դատ՝ կարգապահությունը խախտողների վրա, աշխատանքից ու շացողների, լոդրների, սիմուլյանների վրա և այլն։ Այս տարբի մեր կոլխոզների աշխատանքների մեթոզները փոխելու բնագավառում արդեն ունենք հսկայական նվաճումներ, դա տարեկան արտադրական ծրագիր կազմելն է։ Այսոր Հայաստանի կոլխոզներն ունեն ձեռքի տակ տարեկան արտադրական ծրագիր։ Շառաջնակարգ խնդիրներից մեկը, վորը պետք ե լելակետ ծառալի գարնանացանի և կոլտնտեսությունների 1931 թ. ամբողջ գործունելության համար, դա արտադրական ծրագիր կազմելն է։ Այդ աշխատանքը մեր կոլխոզներն արդեն կատարել են։

Այն հանգամանքը, վոր կոլխոզների արտադրական ծրագրի կազմելուն մասնակցել ե կոլխոզի ամբողջ մասսան և գյուղի վորջ աշխատավորությունը, ունի այն նշանակությունը, վոր յուրաքանչյուր կոլխոզնիկ մանրամասնորեն քըննության ե առել 1931 թ. արտադրական տարվա ընթացքում կատարվելիք բոլոր աշխատանքները և պարզ պատկերացնում ե, թե ինչպիսի պարտականություն ե դրվում իր վրա, տնտեսության վոր ճյուղն ե, վոր ապահովում ե կոլխոզի արագ զարգացումը, տարվա վոր շըրջանն ե, վոր պահանջում ե առավելագույն աշխատանքի լարվածություն։ Արտադրական ծրագիրն ե, վոր պարզաբանում ե և հաշվի առնում տնտեսության աշխատանքների համար պահանջվող նոր և նորոգման յենթակա մեքենաների, գործիքների, քաշող ուժի քանակը, ծրագրում ե առուների մաքրման աշխատանքները, պարզում ե պահանջվող անսանեկերի, սերմի պարատանկութերի քանակը, նրանց ոգտագործման ժամկետերն ու ձևերը։

Արտադրական ծրագրումն ե, վոր մանրամասն հաշվի լե առնվում այն ագրոնոմիական ու տնտեսական ոգնությունը, վորը կոլխոզը վորպես կազմակերպված տնտեսություն պետք ե ցուց տա հարեւան - այսորվա անհատ - վաղվակոլխոզնիկ աշխատավոր գյուղացուն։

Սակայն միմիայն արտադրական ծրագիր  
ունենալը դեռ չի նշանակում, վոր կոլխոզում  
արդեն ապահովված ե պլանավիճակն անտեսավա-  
րությունը։ Յուրաքանչյուր կոլխոզի իկ պետք  
ե լավ ծանոթ լինի Հայաստանի Կոլտնտկենտ-  
րոնի փերջին և ինչպես կազմակերպել և գնա-  
հանել ու հաշվի լենթարկել աշխատանքը հրա-  
հանդի հետ։ Կոլխոզի հետագա աշխատանք-  
ների հաջող ընթացքը կախված ե նրանից, թե  
ինչ չափով կոլխոզը կկարողանա ճշգրիտ, հա-  
մաձայն արտադրական ծրագրի կազմակերպել  
աշխատանքը, դասավորել բանվորական և քաջող  
ուժերը ու գործիքների ոգտագործումը; վոր-  
պեսզի ապահովված լինի թե մաքսիմալ չափով  
արտադրողականության բարձրացումը և թե  
աշխատանքի վորակի լավացումը։ Իսկ ինչպիսի  
թերություններ են ունեցել մեր կոլխոզներն  
անցյալ տարի աշխատանքի կազմակերպման,  
գնահատման և հաշլառան բնագավառում, այդ  
մասին ասված ե Կոլտնտկենտրոնի վերջին հրա-  
հանդում։

Այդ հրահանդում ասված ե, վոր աշխա-  
տանքը հաշվի յե առնվել և գնահատվել դրամա-  
կան ցուցանիշն ըստ, գուծավարձալին ձեր շատ  
տեղերում չի կիրառվել, արտադրանքի նորմա-  
ներ մշակված չեն լեղել և այդ նորմաները քըն-

նության չեն առնվել արտադրական խորհրդակ-  
ցություններում և ընդհանուր ժողովներում։  
Սոց-մրցումն ու հարվածախությունը թույլ ե  
կազմակերպված լեզել տեղերում, վայոշ տեղերում  
կնքված պայմանագրերը մնացել են թղթի վրա,  
նրանց կատարումը չի ստուգվել բերքի բաշխումը  
տեղադրել կատարվել ե ըստ շնչերի։ Այս բոլորից  
առաջացել ե աշխատանքի արտադրողականու-  
թյան, վորակի և դիսցիլի ինալի անկում։ աշ-  
խատանքի գնահատումը դրամական ցուցանիշ-  
ներով առաջ ե բերել բացասական լեզուալիներ,  
ան և՝ տարեվերջին կոլտնտեսությունը պարտք  
ե մնացել կոլտնտեսականներին, վերը չեր կա-  
րող տեղի ունենալ, ինթե աշխատանքները գնա-  
հատվելին աշխատանքի որերով և ըստ վորակի։  
Կոլտնտեսականն իրեն զգացել ե վարձու բան-  
վորի գերում, վորի հետևանքով նրա մեջ չի ա-  
ռաջ ցել շահագրգուվածություն, պատասխանա-  
տվության զգացմունք գեպի կոլտնտեսության  
աշխատանքները, բերքատվության բարձրացնելը  
և զուգը պահպանելը։

Այդ պատճառով կոլտնտկենտրոնն առաջար-  
կում ե միանգամայն նոր ձև աշխատանքի կազ-  
մակերպման; գնահատման և հաշվառման համար,  
վերը մանրամասն ասում ե վերոհիշյալ հրահանգը։  
Այդ հրահանգի հիմնական կետերը սրանք են՝

Բոլոր կոլտնաեսություններից կազմակերպել բրիգադներ խառը (տարբեր աշխատանքների համար) և հատուկ աշխատանքների համար, բրիգադներին պետք ե տալ հատուկ նարբագներ, կատարվելիք աշխատանքները նշելու համար պետք ե ունենալ առանձին ցուցակներ, վորոնցում գրված պիտի լինի տվյալ՝ բրիգադի կազմը, աշխատանքի տեսակը, քանակը, կատարման ժամկետը, գնահատումն աշխատանքի որերով և այլն:

Գործակարձը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումը կատարել աշխատանքի որերով գործադրության բոլոր ճյուղերում թե անհատական և թե խմբակային ձեռվ։ Արտադրանքի նորմաներ մշակելիս, վորպես չափանիշ պետք ե ընդունել լավագույն կոլտնտեսական հարվածայինների արտադրանքի նորմաները։ Այդ նորմաների հիման վրա յուրաքանչյուր կոլխոզ պետք ե անցնի աշխատանքի գործակարձային ձերին, հիմք ընդունելով տրված հրահանգը։ Աշխատանքի միավորները գործակարձով և աշխատանքի որերով գնահատելու համար—անհրաժեշտ ե կոլխոզի բոլոր տեսակի աշխատանքները բաժանել թեթև, միջուկ, ծանր և հատուկ մասերի։ Կտրականապես արգելել կոլտնտեսականների աշխատանքը դրամով գնահատելու թեկառությունը լինի բերքը բաշխելու համար։

Խառանի առերքը արգելել բերքի բաշխումը ըստ նողի, գույքի, ժնվի յեկ այլ հատկանիւնների։ Յուրաքանչյուր կոլխոզում կազմակերպել արտադրական խօրհրդակցություններ, վորոնցում քընության առնել տնտեսության արտադրական և ֆինանսական խնդիրները, մասնակցությամբ ակտիվ կոլտնտեսականների, հարվածայինների, մասնագետների, բրիգադինների և այլն։ Կազմակերպել և մասսայորեն ներգրավել կոլտնտեսականներին սոցմըցման և հարվածայնության գործի մեջ, պարզեատրելով սոցմըցման և հարվածայնության մեջ աչքի ընկնող բրիգադներին և առանձին կոլտնտեսականներին։ Սա լե կոլտնտեսակենտրոնի վերջին հրահանգի համառոտ բովանդակությունը։

Այս հրահանգը լիովին և ճիշտ կատարելու համար կոլխոզները պետք ե ունենան համապատասխան պատրաստված կաղըեր։ Կաղըերի պատրաստման համար այս տարի հսկայական աշխատանք և տարբում կոլտնտեսակենտրոնի, մեքենատրակտորային կայանների և այլ շահագրգոված հիմնարկների գծով։

Այս միջոցներով վորոշ չափով կարելի է ապահով համարել կոլխոզների անհրաժեշտ աշխատաղների գործը։ Բայց պիտի ընդգծել և շեշտել, վոր կաղըերի հարցը կոլտնտեսությունները, վոր կաղըերի հարցը կոլտնտեսությունները լինի բերքը բաշխելու համար։

ըուժ շատ սուր ե և արդ հարցով պետք ե լուրջ կերպով մտահոգվեն և լավ մտածեն հենց իրենց կոլտնտեսականները, կոլխոզները և մեր տեղերի համապատասխան մարմինները և կազմակերպությունները:

Չնայած, վոր անցյալ տարի կոլխոզներում պատրաստված ուժերի կարիքը նույնպես մեծ եր, այնուամենահիվ հաճախ միանգամայն թերագուանատում ելին կոլտնտեսական միջակ գյուղացու աշխատանքի հարուստ փորձը, և չեյին ոգտագործում այդ հնարավորությունը, փոխանակ միջակին վորպես փորձված գյուղացու ոգտագործելու արտադրության վերաբերվող այս կամ այն հարցը լուծելու գործում։ Մեզ մոտ սովորություն կար և ալժմ ել փորոշ տեղերում դոլություն ունի միջակին հեռու պահել այդպիսի շխատանքներից։ Այդ յերեվույթներին պես ե վերջ տալ. այս տարի լրիվ ու արգ զունավետ պիտի ոգտագործել միջակին տընտեսության բոլոր աշխատանքներում, խորհրդակցել նրա հետ, ակտիվ մասնակից դարձնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին, նշանակել բրիդաղի ղեկավար և այլն։ Այդպիսի վերաբերունքը կնպաստի թե արտագրողականության բարձրացման և թե նորանոր միջակ տնտեսատերերի կոլխոզ ներգրավելու գործին։

**Այժմ մենք տպրում ենք գարնանացանի նոխորյակին, դաշտային աշխատանքների համար մոռմ են որեր. կոլխոզնիկների առաջ դրված են հետեւալ հրատապ խողիբները.**

- 1) Հարցուր տոկոսով մասնակցել առունետի մահման աշխատանքներին, ապահովելով պետքան կողմից նախատեսնված ժամկետները։ Զգետք ե մոռանալ, վոր բամբակի ցանքի հաջող ընթացքը մեծ շափերով կախված ե ջրի ծրագրված և խնայողաբար ոգտագործելուց։ 2) Ետապ կերպով վերջացնել մեմենաների ու զործիների նորոգումը։ 3) Ապահովել տնտեսությունը պահանջվող բանակությամբ սերմով, պարարտանյութերով յեվ այն։ 4) Պարզել գարնանացանի համար պահանջվող անասնակերի բանակը յեվ ժամանակին տեղափոխել այն։ 5) Կազմել գարնանացանի որացույցային ծրագիր. այժմ մանից բաշխել աշխատանքները բրիդաղների ու անհատ կոլտնտեսականների մեջ։ 6) Կազմակերպել արտադրական հանձնաժողովներ, մօսկել յեվ հնարյան առնել արտադրանի նորմաները։ 7) Զեռք առնել բոլոր միջոցները տնտեսության բոլոր մեմենաները յեվ հասող ուժը լրիվ ոգտագործելու համար։ 8) Տրակտորների 20-ժամյա անընդհատ աշխատանքներ ապահովելու համար այժմկանից ծրագրել նավթամբերների, չի

յեվ սննդի ժամանակին տեղափոխելու յեվ  
սպասութելու գործը:

Հաշվի առնել անցյալ տարվա սխալները և  
թերությունները, դնել իր բարձրության վրա  
աշխատանքի կազմակերպումը, լայն չափով կի-  
րառել հարվածայնությունը, սոցմրցումը և գոր-  
ծարքային սիստեմը, խիստ պահպանել յուրա-  
քանչյուր աշխատանքի կատարման ժամկետները,  
առավել չափով բարձրացնել աշխատանքի վո-  
րակը և կանոնավոր ոգտագործել ջուրը, լրիվ  
ոգտագործել կենդանի ու մեռյալ ինվենտարը  
Քաղաքի պրոլետարիատի կոփիված և ամուր ղե-  
կավարությամբ ջախջախելով կուլակության և  
նրա ագենտուրա/ի աջ և ձախ» ոպորտյունիստ-  
ների կողմից կատաղի դիմադրությունը—առաջ  
հանուն բամբակի անկախության, հանուն բայլ-  
շեիկյան լերկրորդ գարնանացանի ծրագրի կա-  
տարման և գերակատարման:



«Ազգային գրադարան



NL0209166

189-

ԳԻԱԸ 5 ԿՐՊ.



С. САРКСЯН

Но́хозы на фронте борьбы  
за независимость хлопка

Госиздат ССР Армении  
Эривань—1931